

lyon de lizingne quit roy lati du royaume darmenie qui redi lame a dieu a paris le. xxix^e. jour de nouebre lan de grace. m. ccc. ^{XX} et xiii. pries | pour lui. Ասոր թարգմանութիւնն է. « Աստ հանգչի մեծատոհմ եւ մեծապայծառ իշխան Լեւոն Լուսինեան հինգերորդ, լատին արքայ Հայոց թագաւորութեան, որ աւանդեաց զհոգին առ Աստուած, ի Պարիս, ի 29-րդ աւուր նոյեմբերի, յամի շնորհաց 1393: Աղօթեցէք վասն նորա: »

Այս արձանագրութիւնը չառ անգամներ հրատարակուած է զանազան թերթերու եւ գրքերու մէջ, բայց ո՛չ մէկը — առանց բացատրութեան — ուղիղ ընթերցում մը տուած է: Առաջին անգամ ե՛ս եղած եմ ճիշտ եւ անսխալ կերպով հրատարակողը (1), տեղւոյն վրայ անձամբ քննելով տապանագիրն եւ խուզարկութիւններ ընելով այդ մասին, ինչպէս սկիսի յիշեմ յաջորդ գլխուն մէջ: Հրապարակի վրայ շրջաբերութեան հանուած եւ գրքերու մէջ տպուած է Լեւոնի անունով դամբանի մը պատկերը, վրան հետեւեալ հայերէն (!) արձանագրութիւնով. « Հոս (Փարիզ կեղեաստինեանց եկեղեցւոյն մէջ Eglise de St Denis) | կհանգչի զերազնիւ իշխան Լեւոն Լուսինեան վերջին թագաւոր | հայոց տէրութեան որ աւանդեց զհոգին աստուծոյ ի փարիզ | հազար երեք հարիւր իննսուն երեք նոյեմբերի քսաներկրորդ օրը »: Տարակոյս չկայ թէ այս արձանագրութիւնը կեղծ է. առաջին եւ վերջին տողերուն մէջ գտնուած հակասական բառերն ու խոչոր սխալները բաւական են հաստատելու կեղծիքը. թո՛ղ թէ Լեւոնի չիրմին վրայ հայերէն տա՛ն մ'իսկ չէ գրուած:

Գրքիս սկիզբը դրուած գունաւոր պատկերը կը ներկայացնէ Լեւոնի հին ժամանակուան դամբարանը, որ բարերախտաբար Ժ.Ը. դարուն սկիզբները նկարուած եւ պահուած է հաւաքածուի մը մէջ (2), որմէ օրինակելով հրատարակած է A. Lenoir իր *Statistique monumentale de Paris* մեծագիր երկասիրութեան պատկերներու երկրորդ հատորով, կեղեաստինեանց նուիրած բաժնին մէջ, տխտ. ԺԴ:

Ինչպէս կը տեսնուի, Լեւոնի սպիտակ մարմարիոնէ շինուած արձանը պառկած է սեւ մարմարիոնէ կափարչին վրայ, որուն երկայնութիւնն է

(1) Տե՛ս այս մասին Պարիսի Ասիական Ընկերութեան 11 մայիս 1906-ի նստին ներկայացուցած զեկուցումս, որ լոյս տեսած է *Journal Asiatique*-ի մէջ, 1906 Մայիս-Յունիս պահով, եր. 520-524:

(2) Տե՛ս Ֆրանսական Ազգ. Մատենադարանի պատկերներու բաժինը, Tombeaux de Gainières, Pe 11 a Réserve, պղ. 252: